

դէպս, մեզ համար այն նշանակութիւն ունի, որ մի առասպելի մէջ Մեծն Տիգրանի հայրն է Երրուանդ, և միւս առասպելը Վաղարշապատի սկիզբը կապում է Մեծն Տիգրանի այս հօր և հենց իրեն Մեծն Տիգրանի հետ:

Այս առասպելի մէջ կարող է պահուած լինել բուն պատմական յիշողութիւն, թէ Վարդգէսի աւանը շինուած է Մեծն Տիգրանի և իւր հօր օրով: Սակայն առասպելը հաւասառեաւ առանձին արժէք ու նշանակութիւն է ստացած և զարգացած յետոյ, երբ Վարդգէսի աւանը, Նոր Քաղաք և Վաղարշապատ անունով, Հայտատանի մայրաքաղաքն էր: Միւս կողմից առասպելն ամբողջապէս կարող է այս ժամանակներում ևս ստեղծուած լինել և կապուած ժողովրդական առասպելի յայտնի և սիրելի դիւցազն Մեծն Տիգրանի և իւր հօր անուանը: Ինչպէս լինի այս առասպելի սկիզբը պատմական յիշողութիւն ունենայ իւր մէջ թէ Վաղարշապատի փառքը բարձրացնելու համար միայն յետոյ ստեղծուած լինի, այդ երկրորդական է, մեզ համար միայն այն նշանակութիւն ունի, որ Վարդգէսի աւանի առասպելը ժողովրդական է և հակառակ Խորենացու բացատրութեան, պատկանում է Մեծն Տիգրանի առասպելի շրջանին:

Մ. Աքեղեան.



ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Անցեալ տարի Հայկական թերթերը աւետեցին մեզ Մ. Մամուրեանի 50 ամեաց դորժունիւթեան առթիւ կատարուած յօրելեանի մասին: այս տարի արգէն՝ յունուարի 17-ին, գումարեցին նորա մահուան լուրը...

Մամուրեանի մահը մեր ազգի համար անկատելի անցնել չի կարող, որովհեաւ եթէ ունինք մեր մէջ մի քանի վաստակառ մարդիկ, նոցա զիստուոր աշխատառորներից մէկն էլ Մամուրեանն էր. այս վկայում են նորա բազմաթիւ և բազմադիրն գործերը:

Մատթէոս Մամուրեանը ծնուելէ 1 307, Զմիւռնիայում: Նորա ծնողները լինիկ Զմիւռնացի են եղել: Իր սկզբնական կրթութիւնը տասցել է Սիրայի Յունաց դպրոցում: շարու նակել է ծննդավայրում՝ գանուած Մեսրուքիան վարժարանում և աւարտել է Պարիկ Մուրատանի վարժարանում: և այսակ արդէն իրը աշակերտ նոս աչքի է ընկել իւր արտակարդ ընդունակութիւններով: Պարիկի նշանառոր մենանց ներկայութեամբ վարժարանում կատարուած մըցանակարաշխուութեան ժամուականակարաշխուութիւնը Մամուրեանը արժանաւոր արդարութիւնը է միշտ բարեբարոյ, խոհական ու շիմն ճարտար և այն դովարանական խօսքերին, և հուշակառ ապահանական խօսքերին, և հուշակառ բանասեղջ Կամարտինը՝ նկատելով նորա մէջ ապագայ նշանաւոր մարդու յատկանիշները և նախատեսելով պատասի Մամուրեանի բեղմանուոր դորձնելութեան՝ փառառուոր ապագան դափնիներով պատել է նորան: Աւսումն աւարտելուց յետոյ զայիս է Պոլիս և ստանձնում է Արամեան վարժարանի առելութեան՝ պատշտօնը: Այնուհետեւ դառնուում է Պատրիարքարանի զիւանապետ միեւնոյն ժամանակ զրագուելով ամիրաների որդոց կրթութեամբ սակայն նորա դորձնունելութիւնը Պոլուում երկարանէ չի լինում: նա շուտով թողնուում է Պոլիսը և զնուում իւր սիրած Հայրենիքը Զմիւռնիայի ուր և հաստատուն հիմք է զնուում իւր բեղմանուոր աշխատութեան: Այստեղ նորան աեւնուում ենք իրեն տեսուչ և ուսուցիչն իրեւ հեղինակ ու թարգմանիչ, ոյլի իր խմբագրապետ ու տպարանապետ: Քանի ասքի Զմիւռնիոյ Մեսրուքիան և Հորիսիմեան վարժարաններում աեւզու թեան պաշտօն է վարել միեւնոյն ժամանակ համարչեալ: լոյս ընծայել բազմաթիւ ինքնուրոյն և թարգմանական զրուածքները որոնց միայն վիրանդիթները կյիշենք այստեղի որպեսզի գելթ մօտաւոր զաղափար կարելի լինի կազմել այն աշխատառոր մօրդու անդուլ և արդիւնաւելու դորձնելութեան մասին:

Խնդնուրոյն զրուածքներ.

1. Անդիմիական նամականի.
2. Առաջին ընթերցարան.

3. Առողջաբանութիւն աղջկանց.
4. Բանալի Հայ շարադրութեան.
5. Գիտելիք, պարտիք աղոց.
6. Երկրորդ ընթերցաբան.
7. Ըստի, պատմութիւն ման Ա. Յ. Դ.
8. Երաւարտնութիւն.
9. Պատմութիւն Հայոց.
10. Տունէն զուրս. Ժառագալիսադ.
11. Հայկական նամականի.
12. Առանին անանեսութիւն.
13. Սէլլերէն մարդ.
14. Սէֆէլէնց առունը.
15. Տիրայր կամ մեծ մարդ.

Թարգմանութիւններ

1. Ամուրիի մը երազներ Անդլիերէնից.
2. Ամօրի Փրանտերէնից.
3. Անիծեալն:
4. Աշխարհի Արձանիը.
5. Բերուզակ.
6. Դաղանիք Պարիզի 8 հար.
7. Երեք հրացանակիրք.
8. Իվանուէ 3 հար.
9. Զատիկ.
10. Խորհրդաւոր կղզի 3 հար.
11. Կարապի երգը.
12. Հազար ու մեկ գիշերներ.
13. Համառօտ պամութիւն բնական գիտութեանց.
14. Մանկակիք.
15. Մենասամենի աղօլթըն.
16. Մերօ Մելսա.
17. Պրոֆլօն Դերկոմ 12 հար.
18. Սէփլիլ Սակրիչը.
19. Սիզիրիականի մի յիշասակը.
20. Վերդեր.
21. Քսան տարի երք.
22. Վիլտէն.

1871 թուականից սկսած շարունակ նորա խրազրութեան տակ հրատարակուել է «Արքելեան մամուլը» 1883 թուին Մամուրեանը հիմնել է իւր անուամբ մի տպարան, տպարանին կից շինել է կազմատուն և գրադարանը որի մէջ ծախուում են Պոլիս Վիեննա, Վենետիկ տպագրուած հայերէն գրեթէ

բոլոր գրքերը: Մամուրեանը նաև իր նախագահ մասնակցել է Զմիւռնոյ կրթութեան շատ հաստատութեանց: Այս բոլորի հետ այլեւ չպետք է մոռանանիք այն հանգամանքը, որ Մամուրեան գործելով զրաբառ և աշխարհաբառ լեզուների վերջնական և վճռական մարտի ժամանակ և ինքը կողմիակից լինելով աշխարհիկ բարբառին իւր բազմաթիւ աշխատութիւններովը մեծապէս նպաստել է աշխարհաբառի յաղթանակին և նորա զարգացմանը:

Բայց այս երկարատև աշխատութիւնը նորան վերջի վերջու ուժասպառ արաւ, և նա արդէն անցեալ ատրի՝ քաշուեց գործնէութեան ասպարեզից, երեխ զգալովի որ մօտ էր իր վախճանը: Մամուրեան իւր մահկանացուն կնքեց 71 տարեկան հասակում:



Յառօք սրաի պիտի նկատենք, որ մենք, առհասարակ, աւելի շատ մեր ազգի վիշտերն ու կորուսոներն ենք առիջ ունենում յիշելու քան նորա բազգաւոր օրերը: Նորերս բացի Մամուրեանից մեռաւ նաև տիկինն Արբուզի Տիւսար, մեր շատ սսկաւածիւ հեղինակներից մէկը, որի գործերը մեր ազգի աղքատիկ զբականութեան մէջ իրենց պատուաւոր տեղն ունին: Նա թողել է «աշխարհաբար հայ լեզու» վերնադրով մի աշխատութիւն և երեք վեպեր՝ «Մայտա» (1883 թ.), «Տիրանուշ» (1884 թ.), «Արաբսիս կամ վարժուշն» (1887 թ.): Իւր վեպերի մէջ Տ. Տիւսարը ներկայանում է ճաշտ որ պաշտպան կանաց իրաւունքի, իսկ իւր զբական գործնէութեամբը ընդհանրապէս տուածին օրինակը մեր կանաց համար:

